Ե-13622

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան
«13» 12. 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 275 - 24

Նախաձեռնող՝ *Արսեն Ասլանյան*
ք .Երևան, Ն.Ստեփանյան փ.1/6

Գործունեությունը՝ *Նոր Նորք վարչական շրջանի Պ. Սաֆյան անցուղի 4 և Ն.Ստեփանյան փողոց 1/6 հասցեներում նախատեսվող հասարակական նշանակության շենքի կառուցում*
ք.Երևան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 275 - 24

«13» դեկտեմբերի 2024թ.

Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանի Պ. Սաֆյան անցուղի 4 և Ն.Ստեփանյան փողոց 1/6 հասցեներում նախատեսվող հասարակական նշանակության շենքի կառուցման ՇՄԱԳ հաշվետվություն

Նախաձեռնող՝	Արսեն Ասլանյան
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/նախագիծ
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Երևան քաղաք, Նոր Նորք վարչական շրջան

Ներածական մաս. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման Փորձաքննության ներկայացված հաշվետվությամբ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջան Պ. Սաֆյան անցուղի 4 և Ն.Ստեփանյան փողոց 1/6 հասցեներում գտնվող տարածքում: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի՝ 8-րդ կետի «ա» ենթակետի նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել հասարակական նշանակության շենքի նախագծային փաստաթղթերը՝

- ուսումնասիրվող տեղամասի ինժեներաերկրաբանական հետազոտությունների եզրակացությունը,
- համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները,
- հողատարածքների սեփականության վկայականները՝ N 27022024-01-0242 և 06052022-01-0199
- ճարտարապետահատակագծային առաջադրանքը՝ N 01/50-01-338-24 տրված՝ 12.06.2024թ.
- հողամասի նպատակային նշանակությունը՝ կամ հողատեսքը՝ բնակավայրերի է:
- գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Հողամասը գտնվում է Նոր-Նորք վարչական շրջանի Պ. Սաֆյան անցուղի 4 և Ն.Ստեփանյան փողոց 1/6 հասցեներում:

Նախագծով առաջարկվում է կառուցել բազմագործառույթ շենք: Այն բաղկացած է լինելու երեք նկուղային և տասնվեց վերգետնյա հարկերից: Ըստ հատակագծային լուծման շենքն ունի անկանոն բազմանկյան տեսք: Շենքը բաղկացած է երեք ուղղահայաց ուղղիներով կապված գրասենյակային և հյուրանոցային համարներից:

Նկուղային հարկը (-10.50 նիշում) նախատեսված է 42 ավտոկայանատեղերի և տեխնիկական տարածքների համար, -7.20 նիշում նախատեսված է 40 ավտոմեքենայի համար, -3.90 նիշում՝ 32 ավտոմեքենայի համար ինչպես նաև տեխնիկական տարածքների: Առաջին հարկում (0.00 նիշում) տեղակայված են լինելու տարբեր ընդունարաններ ինչպես նաև ռեստորան: Երկրորդից հինգերորդ հարկերում (+4.50 և +15.30 նիշերում) տեղակայված են լինելու գրասենյակային տարածքները: Վեցերորդից տասնվեցերորդ հարկերում (+18.90 և +54.90 նիշերում) տեղակայված են հյուրանոցային համարները: Աստիճանավանդակի և վերելակներին հարակից դռները նախատեսվում է պատրաստել հակահրդեհային նյութերից: Գլխավոր ճակատը երեսապատվելու է հարդարման որակյալ նյութերով՝ տուֆե, բազալտե և տրավերտինե սալեր, բարձրորակ սվաղ և ապակի: Տանիքը հարթ է, կազմակերպված ներքին ջրահեռացմամբ: Նախագիծը մշակված է գործող քաղաքաշինական նորմերին համապատասխան: Համալիրում նախատեսված են բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժվելու անհրաժեշտ պայմանները: Գլխավոր մուտքին կից կազմակերպված է թեքահարթակ, իսկ վերելակներից մեկը ապահովվում է հենաշարժային խնդիրներով մարդկանց և սայլակների ազատ տեղաշարժը:

Տարածքում առկա քանդման ենթակա շինություններն իրենցից ներկայացնում են մեկ և երկու հարկանի՝ մետաղական և Ե/Բ կոնստրուկցիաներով կառույցներ, որի քանդումը կիրականացվի բացառապես տեխնիկական միջոցներով:

Ենթակա տարածքում առկա են 3 եղևնի և մի քանի մրգատու ծառեր, որոնք դուրս են կառուցապատման հատվածից և չեն հատվելու կամ վնասվելու:

Շենքի տեխնիկա-տնտեսական ցուցանիշներն են՝

Հողի ընդհանուր մակերես՝ 2711.5 քմ,

Կառուցապատման մակերես՝ 1424 քմ – 52,5 %,

Անջրանցիկ մակերես՝ 202,5 քմ – 7,5 %,

Կանաչապատման մակերես՝ 1085 քմ – 40 %,

Ստորգետնյա յուրաքանչյուր հարկի մակերես՝ 1762 քմ,

Ընդհանուր շինարարական մակերես՝ 29240քմ,

Հյուրանոցա-գրասենյակային համարներ՝ 238 հատ,

Ավտոկայանատեղեր՝ ստորգետնյա 114հատ, վերգետնյա 9հատ:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածկագիրը՝ 9120040001004/՝ 4.3 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր և 980 խմ շինարարական աղբը /ծածկագիրը՝ 9120060101004/, որն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շինարարության փուլում ջրցանման համար անհրաժեշտ ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով: Նախագիծը ենթադրում է նաև հիմքերի փորման աշխատանքների իրականացում : Ե/բ հիմքիերի տեղադրման համար կատարվելու է մոտ 3000 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքեր: Հանվող 2600 խմ ծավալով զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Պատճառաբանական մաս. Փորձաքննության շրջանակներում կատարվել է գործունեությանն առնչվող գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական ելակետային պայմանների ուսումնասիրություն: Նախատեսվել է գործունեության իրականացման արդյունքում հնարավոր բնապահպանական և սոցիալական վնասակար ազդեցությունների կանխատեսումը և դրանց կանխարգելմանը, նվազեցմանը կամ բացառմանն ուղղված համապատասխան մեղմման միջոցառումներ, դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմներ: Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝

- շինարարության ընթացքում մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ,
- օդային ավազան արտանետումների՝ պայմանավորված շինտեխնիկայի աշխատանքի արդյունքում արտանետումների, հողային աշխատանքների հետ,
- հողային, ջրային ռեսուրսների օգտագործման հետ,
- արտակարգ իրավիճակների առաջացման հետ,
- թափոնների կառավարման հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում: Շենքի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները՝

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ,

2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրական 2-3 անգամ,

3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

5. Հարակից տարածքներում կենսաբազմազանության մոնիթորինգ 3 ամիս մեկ հաճախականությամբ:

Տարածքի կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կներկայացվի Երևանի քաղաքապետարանի համաձայնեցմանը: Զրոյական նիշում կանաչապատ մակերեսը կազմելու է 1085 քմ: Տարածքում նախնական նախատեսվում է տնկել՝ Գնդաձև ակացիա 4 հատ, Ուռենի բաբելոնական 2 հատ, Թույա 2 հատ, Գնդաձև թույա 2 հատ, Յասաման 4 հատ, վարդեր գետնատարած 10 հատ, Բոցենի 30 հատ, Վաղենակ 24 հատ, Սոխածաղիկ 300 հատ: Կպահպանվեն և կանաչապատման նախագծում կներգրավվեն նաև տարածքում առկա 3 եղևնիները և մնացած ծառերը: Կանաչապատ տարածքների ոռոգման ներքին ցանցը նախատեսվում է կաթիլային՝ հարևանությամբ գտնվող ոռոգման ցանցից:

Եզրափակիչ մաս Հանրային լսումների ծանուցումը իրականացվել է համաձայն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգի: Հանրային լսումներն իրականացվել են Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի նստավայրում: Հանրային լսումների նպատակն է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի և ազդակիր հանրության կարծիքները, առարկություններն, առաջարկություններն և դիտողությունները նախատեսվող գործունեության վերաբերյալ: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, քաղաքաշինության կոմիտեն, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակված տարբերակում: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծության համաձայն, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կլինի թույլատրելի նորմայի սահմաններում, քանի որ շինարարական աշխատանքների ազդեցություններն իրենց բնույթով սահմանափակ են և կրում են ժամանակավոր բնույթ: Տարածքի տեղազննման և հաշվետվությամբ ներկայացված տվյալների նույնականացման արդյունքում նախագծից շեղումներ չեն հայտնաբերվել:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Պարտադիր կատարման ենթակա պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով, շինարարության ընթացքում՝ ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով:
- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:
- **Տարածքը տանսպորտային միջոցներով գերծանրաբեռնված լինելու պատճառով՝ անհրաժեշտ է նախատեսել վերգետնյա լրացուցիչ ավտոկայանատեղեր, բացառելով դրա իրականացումը ի հաշիվ նախատեսված կանաչ տարածքների:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացի Ա.Ասլանյանի կողմից փորձաքննության ներկայացված Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Պ. Սաֆյան անցուղի 4 և Ն.Ստեփանյան փողոց 1/6 հասցեներում նախատեսվող հասարակական նշանակության շենքի կառուցման ՇՄԱԳ հաշվետվությանը տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Շուշանիկ Կարապետյան